

**ԿՈՍՈՎՈՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԹՈՐՈՍՅԱՆ Տ. Ս.

Արդարադատության միջազգային դատարանի՝ 2010 թ. հուլիսի 22-ին հրապարակած խորհրդատվական կարծիքը՝ միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմանի հռչակման համապատասխանության վերաբերյալ, բացառիկ նշանակություն կունենա այն հակամարտությունների կարգավորման հարցում, որոնց հիմքում ժողովուրդների ինքնորոշման իրավունքն է: Ճիշտ է, եզրակացության հրապարակումից հետո որոշ երկրների ներկայացուցիչներ փորձեցին քաղաքական ենթատեքստ հաղորդել փաստաթղթին՝ շարունակելով պնդել Կոսովոյի հակամարտության եզակիության թեզը¹, սակայն եզրակացության ուսումնասիրությունը վկայում է, որ դա սոսկ իրավական փաստաթղթի բնույթի ու բովանդակության անհաջող նենգափոխում է՝ քաղաքական նպատակներով: Կարծիքի անսպասելիության ազդեցությունը միաժամանակ այնքան մեծ էր, որ տպավորություն ստեղծվեց, թե Կոսովոյի կարգավիճակի որոշման գործընթացը սկսվել է 2008 թ. փետրվարի 17-ին՝ անկախության միակողմանի հռչակմամբ, և ավարտվում է կարծիքի հրապարակումով: Մինչդեռ Կոսովոյի կարգավիճակի որոշման գործընթացն ունի մեկ տասնամյակից ավելի տարիների պատմություն: Առաջին նշանակալից քայլը, որով միջազգային հանրությունը փորձեց կարգավորել հակամարտությունն ու սահմանել Կոսովոյի կարգավիճակը, կարելի է համարել 1999 թ. Ռամբույեի համաձայնությունների ձևավորումը²: Այն Կոսովոյի համար սահմանում էր ավելի լայն ինքնավարություն, ներքին հարցերում ինքնուրույնություն, Սահմանադրության ընդունում և այլն: Կոսովոյի ալբանացիները համաձայնվեցին ինքնավարության առաջարկվող ձևվաչափին, Միլոշևիչը՝ Հարավսլավիայի նախագահը, մերժեց այն: Ռամբույեի բանակցությունները փաստորեն տապալկեցին, սակայն համաձայնություններն օգտագործվեցին հետագա զարգացումների ընթացքում: Կոսովոյի կարգավիճակի որոշման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել հինգ փուլի. 1244 (1999) բանաձևը՝ ՄԱԿ ժամանակավոր կառավարումը, Էյդեի զեկույցները՝ ապագա կարգավիճակի որոշման առաջնահերթությունը, Ահտիսաարիի զեկույցը՝ կարգավիճակի որոշման հայեցակարգը, 2008 թ. փետրվարի 17-ին Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը և ճանաչման գործընթացը, Արդարադատության միջազգային դատա-

¹ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 64-րդ նստաշրջանում A/64/L.65/Rev.1 բանաձևի նախագծի քննարկման ժամանակ Միացյալ Նահանգների ներկայացուցչի ելույթը.
www.un.org/News/Press/docs/2010/ga10980.doc.htm

² UN doc. (The Rambouillet accords) S/1999/648.

րանի խորհրդատվական կարծիքի հրապարակումը՝ կարգավիճակի որոշման իրավական հիմնավորումը: Ստորև կներկայացվի առաջին չորս փուլերի վերլուծությունը, իսկ վերջինը բացառիկ կարևորության և մեծ ծավալի պատճառով առանձին ուսումնասիրության առարկա է:

1244 (1999) բանաձևը՝ ՄԱԿ ժամանակավոր կառավարում: ՄԱԿ Անվտանգության խորհուրդն 1999 թ. հունիսին ընդունեց Կոստովոյի հակամարտության կարգավորման հինգերորդ՝ 1244 (1999) բանաձևը³, որն առանցքային ազդեցություն ունեցավ իրադարձությունների հետագա զարգացման վրա: Խնդիրը միայն այն չէ, որ այդ բանաձևն ուրվագծում էր կարգավորման ամբողջական գործընթացն իր բոլոր ընդգրկումներով: Անվտանգության խորհուրդն այդ բանաձևով ՄԱԿ փաստաթղթի կարգավիճակով օժտեց կարգավորման ընդհանուր սկզբունքները սահմանող G8 խմբի արտգործնախարարների խորհրդակցության արդյունքում (1999 թ. մայիսի 6) ձևավորված հայտարարությունը (1244 բանաձևի հավելված 1) և հետագա զարգացում ստացած սկզբունքների ու պայմանների համախումբը (1244 բանաձևի հավելված 2): Հավելված 1-ը պահանջում էր Կոստովոյից դուրս բերել ռազմական, ոստիկանական և ռազմականացված ուժերը, նախատեսում էր ՄԱԿ-ի հովանու ներքո ձևավորել Կոստովոյի ժամանակավոր կառավարման քաղաքացիական անձնակազմ և անվտանգության ապահովման ուժեր, ստեղծել փախստականների և տեղահանված անձանց անվտանգ և ազատ վերադարձի հնարավորություններ, սկսել քաղաքական գործընթաց, որն ուղղված կլինի ժամանակավոր, շրջանակային քաղաքական համաձայնագրի կնքմանը, որը նախատեսում է Կոստովոյի զգալի ինքնակառավարում՝ լիովին հաշվի առնելով Ռամբույեում նախապատրաստված համաձայնություններն ու Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության ու տարածաշրջանի մյուս երկրների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Վերջին սկզբունքը նույնությամբ տեղ է գտել նաև հավելված 2-ում: Անվտանգության խորհուրդը միաժամանակ կոչ էր անում միջազգային քաղաքացիական անձնակազմին աջակցել քաղաքական գործընթացին, որը կոչված էր, հաշվի առնելով Ռամբույեի համաձայնությունները, որոշելու Կոստովոյի ապագա կարգավիճակը: Փաստորեն այս բանաձևը ոչ միայն քայլեր էր նախատեսում իրավիճակը վերահսկելի և ուղղորդվող դարձնելու ուղղությամբ, այլև ազդարարում էր Կոստովոյի ապագա կարգավիճակի որոշման գործընթացի սկիզբը: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ թեև բանաձևի երկու հավելվածներում մատնանշվում էին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության ու տարածաշրջանի մյուս երկրների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, իսկ նախաբանում կրկին հաստատվում էր ՄԱԿ «անդամ-երկրների հավատարմությունը Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության ու տարածաշրջանի մյուս երկրների ինքնիշխանությանն ու տարածքա-

³ UN Security Council Resolution S/RES/1244 (1999).

յին ամբողջականությանը, որն արտահայտված է հելսինկյան Եզրափակիչ ակտում և հավելված 2-ում», սակայն դա հետագայում խոչընդոտ չդարձավ ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ բանագնացի համար, որ անկախությունն առաջարկի որպես Կոսովոյի վերջնական կարգավիճակ: Շատ պարզ պատճառով: Միջազգային իրավունքի շրջանակում տարածքային ամբողջականության սկզբունքը գործում է ճանաչված պետությունների միջև՝ համաձայն այդ սկզբունքը սահմանող ՄԱԿ կանոնադրության և հելսինկյան Եզրափակիչ ակտի⁴: Որևէ երկրի տարածքային ամբողջականության ճանաչումը ոչ թե նշանակում է գոյություն ունեցող սահմանների հավերժականության ճանաչում, այլ պարզապես այն, որ անդամ երկրները հրաժարվում են միմյանց նկատմամբ տարածքային ոտնձգություններից: Դա ևս մեկ անգամ հաստատում է, որ փաստաթղթերը պահանջում են ճշգրիտ և նուրբ աշխատանք: Սակայն մինչև 2007 թ. Անվտանգության խորհրդին Կոսովոյի անկախությունը որպես այդ հակամարտության լուծման միակ ողջամիտ տարբերակ ներկայացնելը ՄԱԿ Գլխավոր քարտուղարը դեռևս պետք է ստանար Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունում (ՆԱՏՕ) Նորվեգիայի ներկայացուցիչ, պաշտոնաթող գեներալ Կայ Էյդեի երկու զեկույցները Կոսովոյում ձևավորված իրավիճակի վերաբերյալ:

Էյդեի երկու զեկույցներ. ապագա կարգավիճակի որոշման առաջնահերթություն: Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևի համաձայն՝ Կոսովոյում ՄԱԿ առաքելության (ԿՄՄԿԱ, անգլ.՝ UNMIK) կազմավորումից հետո ձևակերպվեց հակամարտության կարգավորման ռազմավարությունը, որի կարգախոսը դարձավ «Նախ՝ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» արտահայտությունը: «Չափորոշիչներ Կոսովոյի համար» փաստաթուղթը⁵ սահմանում էր այն ութ չափորոշիչները՝ ուղենիշներն ու նպատակները, որոնց հասնելու դեպքում ենթադրվում էր, որ Կոսովոյում ոչ միայն կձևավորվեն ժողովրդավարական կառույցներ ու հարաբերություններ, քաղաքացիական հասարակություն, այլև հիմքեր կնախապատրաստվեն Կոսովոյի ալբանացիների ու սերբերի միջև առկա ատելության և անվստահության անջրպետը հաղթահարելու և փոխադարձաբար ընդունելի կարգավիճակ սահմանելու համար: Սակայն Չափորոշիչների ներդրման գործընթացի մեկնարկից մեկ տարի անց՝ 2004 թ. մարտին, Կոսովոյում էթնիկ բռնությունների նոր ալիք բռնկվեց: Կոսովոյի 50000 ալբանացիներ հարձակվեցին սերբերի և մյուս փոքրամասնությունների վրա, որի արդյունքը եղան բազմաթիվ վիրավորներ, 19 սպանվածներ, 4000 փախստականներ⁶: Բռնությունների պոթենցիալի պատճառը լճացման զգացումն ու Կոսովոյի ալբանացիների և սերբերի հարաբերություններում լարվածությունն

⁴ Conference on Security and Co-operation in Europe. Final Act.- www.osce.org/documents/cs/1975/08/4044_en.pdf

⁵ UN doc. (Standards for Kosovo) SC/2004/7951.

⁶ Fridl D. D. Kosovo Negotiations: Re-visiting the Role of Mediation.- *International Negotiation*, 14(2009), pp. 71-93.

էին: Ակնհայտ էր, որ 1244 (1999) բանաձևի ներդրման սպասելիքները չեն արդարանում: ՄԱԿ Գլխավոր քարտուղարը հուլիսի վերջին դիմեց դեսպան Կայ Էյդենին՝ խնդրելով կազմել Կոստվոյում տիրող իրավիճակի վերաբերյալ համապարփակ զեկույց և պատրաստել առաջարկություններ՝ որպես 1244 (1999) բանաձևի համաձայն առաջընթաց ապահովելու հիմք: Ձեկույցը պատրաստ էր օգոստոսին: Գլխավոր քարտուղարն այդ զեկույցի առաջարկությունների վերաբերյալ մի շարք խորհրդատվական քննարկումներ անցկացնելուց հետո Անվտանգության խորհրդին ներկայացրեց Էյդենի զեկույցը և իր առաջարկությունները՝ Կոստվոյում առաջընթացի ուղու հետագա որոնումների վերաբերյալ⁷: Ձեկույցն անդրադառնում է երկու հիմնական խնդրի՝ հակամարտության կարգավորման «համապարփակ համալիր ռազմավարության մշակում» և «ապագա կարգավիճակի որոշում»: Ձեկույցի հինգ բաժիններից մեկում, որը վերնագրված է «Գլխավոր մարտահրավեր. ապագա կարգավիճակի որոշումը», մանրամասն վերլուծվում է Կոստվոյի ապագա կարգավիճակի որոշման խնդիրը տարբեր տեսակետներից, դրա իրականացման նպատակահարմար ժամանակահատվածի հարցը և այլ գործոններ: Նշվում է, որ «Կոստվոյում շարունակում է մեծանալ ճնշումն ապագա կարգավիճակի հարցը արձարծելու հետ կապված, և ...միջազգային հանրությունը ստիպված կլինի անդրադառնալ կարգավիճակի վերաբերյալ բանակցությունների անցկացման ժամկետի հարցի քննարկմանն առնվազն 2005 թ. կեսերին, եթե ոչ ավելի շուտ: Այդ ժամկետների հարցը դիտարկելով երեք տեսակետից՝ ա) Կոստվոյի բնակիչների, բ) տարածաշրջանային, գ) միջազգային հանրության, Էյդեն եզրակացրել է, որ եթե երկու հիմնական համայնքների վրստահությունը միջազգային հանրության նկատմամբ չվերականգնվի, ապա հետագա զարգացումները հնարավոր են հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկով՝ կամ ներքաշվել կարգավիճակի քննարկման հարցի մեջ՝ առանց կայուն պայմաններ ստեղծելու փոքրամասնության համար, կամ հետաձգել կարգավիճակի հարցի քննարկումը՝ բախվելով մեծամասնության ու փոքրամասնության միջև լարվածության շարունակական աճին: Անդրադառնալով Բելգրադի գործոնին՝ Էյդեն նշել է, որ շատերը այնտեղ կարող են հասկանալ, որ Կոստվոյի նկատմամբ իշխանությունը վերականգնել հրնարավոր չէ, և այդ խնդրի լուծման տնտեսական և քաղաքական առավելությունները՝ եվրոպական ինտեգրացիայի ենթատեքստում, կարող են լինել զգալի, մինչդեռ ապագա կարգավիճակի հարցի քննարկման ձգձգումը կթուլացնի Մերքիայի դիրքերը նաև այդ ուղղությամբ: «Տարածաշրջանի տեսակետից ապագա կարգավիճակի հարցի լուծումը կլինի դրական իրադարձություն... բանակցությունների տևական ձգձգումը կարող է առաջացնել կողմնակի անցանկալի էֆեկտ»: «Միջազգային հանրության տեսակետից ապագա կարգավիճակի հարցի քննարկումը պետք է իրականացվի այն ժամանակ, երբ ինքն ունենա ուժեր ու միջոցներ ներքին և արտաքին

⁷ S/2004/932, 30.11.2004.

խնդիրները կանխելու և դրանք լուծելու համար»: Ամփոփելով զեկույցը՝ Էյդեն ներկայացրել է մի շարք առաջարկություններ, որոնք կարելի է դասակարգել երեք խմբի: Առաջինը վերաբերում է «համապարփակ համալիր ռազմավարության» մշակմանը, երկրորդը՝ ԿՄԱԿԱ-ի կառուցվածքի և տեղական կառույցների հետ հարաբերությունների վերանայմանը, երրորդը՝ ապագա կարգավիճակի հարցի քննարկման վերաբերյալ մոտեցումների արմատական վերանայմանը: Երրորդ խմբի առաջարկությունները նախատեսում էին «նախ՝ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» քաղաքականությունն անհապաղ փոխարինել չափորոշիչների հետ կապված ճկուն քաղաքականությամբ (այլ ձևակերպմամբ՝ «կարգավիճակը չափորոշիչներին զուգահեռ»), որի համաձայն՝ ընդհանուր համալիր ռազմավարության շրջանակում այն պետք է աջակցի ապագա կարգավիճակի կարգավորված քննարկումների անցկացմանը, «աշնանը ՄԱԿ-ը պետք է սկսի ապագա կարգավիճակի հարցի ընկալումների շոշափում»: Թեև զեկույցում ուղղակիորեն չի նշվում, թե ինչ ապագա կարգավիճակ է ունենալու Կոսովոն, սակայն դժվար չէ նկատել (մասնավորապես տե՛ս վերը բերված «Բելգրադի գործոնի» գնահատականը), որ ենթատեքստում դիտարկվում է անկախությունը: Գլխավոր քարտուղարի առաջարկությունները պակաս կտրուկ են, քան Էյդեի եզրակացություններում նշված քայլերը, սակայն դժվար չէ համոզվել, որ դրանք սկզբունքորեն նույնն են: Դա արձանագրել է նաև Գլխավոր քարտուղարը՝ գնահատելով զեկույցը. «Իր հիմնալի զեկույցում նա շարադրել է համապարփակ համալիր ռազմավարություն, որը մեզ համար հիմք է ծառայում ներկա վիճակից անցնելու այն գործընթացին, որը թույլ կտա որոշել Կոսովոյի ապագա կարգավիճակը»: Պատահական չէ, որ Կոսովոյի կարգավիճակի որոշման գործնական քայլերի սկիզբը դարձավ 2005 թ. հունիսը, երբ ՄԱԿ Գլխավոր քարտուղարը իր Հատուկ բանագնաց նշանակեց Կայ Էյդեին, որը պետք է ներկայացներ Կոսովոյի վերաբերյալ Համապարփակ զեկույց (հետագայում՝ Զեկույց)՝ պարզելու համար՝ կա՞ն արդյոք պայմաններ Կոսովոյի ապագա կարգավիճակի որոշման քաղաքական գործընթացին անցնելու համար: Իհարկե, Զեկույցն⁸ անդրադառնում է Կոսովոյի իրավիճակին և բոլոր հիմնախնդիրներին, սակայն առանցքն ապագա կարգավիճակի որոշման հարցն է: Ըստ զեկույցողի, այդ կարգավիճակի որոշման «գործընթացի առաջարժման համար պահանջվում է զգուշություն: Դրանում պետք է ներգրավել և ամբողջ ընթացքում պահել բոլոր կողմերին»: Արձանագրելով, որ թեև ՄԱԿ-ը կատարել է տպավորիչ աշխատանք, սակայն իր ազդեցությունը Կոսովոյում նվազում է, Էյդեն առաջարկում է այդ գործում ներգրավել այլ՝ ավելի ազդեցիկ տարածաշրջանային կազմակերպությունների, մասնավորապես Եվրամիությանը: Վերջինս «Կոսովոյի վրա անհրաժեշտ ազդեցության հնարավորություն կունենա և կկարողանա առաջարկել որոշակի հեռանկարներ եվրոպական ինտեգրացիայի շրջանակում»: Թեև Զեկույցն ար

⁸ UN doc. (A Comprehensive Review of the Situation in Kosovo) S/2005/635, 7.10.2005.

ձանագրում էր, որ «չափորոշիչների իրականացման ուղղությամբ առաջընթացը խիստ կասկածելի է», «սակայն ապագա կարգավիճակի որոշման գործընթացի ժամկետների հետաձգումը դժվար թե նոր և էական արդյունքներ տա չափորոշիչների իրականացման հարցում»։ Ձեկույցում Էյդեն առաջընթացը հնարավոր է համարում միայն այն դեպքում, եթե պահպանվեն քաղաքական հեռանկարներն ու միջազգային հանրությունը պատրաստ և ընդունակ լինի ակտիվացնելու ջանքերը և ուժեղացնի ճնշումը։ Նա կարծում է, որ բոլոր կողմերը Կոստովոյի ապագա կարգավիճակի վերաբերյալ հստակության կարիք ունեն։ Միաժամանակ, մեծապես կարևորելով ապագա կարգավիճակի որոշման ժամանակ Կոստովոյում միջազգային հանրության բավարար ներկայությունը, Էյդեն նշում է, որ վերջին շրջանում այդ հանրության անդամների մեջ ուժեղանում է «կոսովյան հոգնածության» ախտանիշը։ Գլխավոր քարտուղարի Հատուկ բանագնացը եզրափակում է. «Ընդհանուր գնահատականը հիմք է տալիս ենթադրելու, որ Կոստովոյի ապագա կարգավիճակը որոշելու գործընթացը սկսելու ժամանակը հասել է... Կոստովոյի ապագա կարգավիճակի որոշումը ինքնաբերաբար կլինի դժվար խնդիր։ Միջազգային հանրությունը պետք է ամեն հնարավոր բան անի՝ ապահովելու համար, որ այդ կարգավիճակը, ինչպիսին էլ այն որոշվի, չլինի չկայացած»։ Որպես այդ զեկույցի հետևանք՝ Անվտանգության խորհրդի շրջանակներում ձեռք բերվեց համաձայնություն, որ վերջնական կարգավիճակի որոշման գործընթացը պետք է սկսվի. «Անվտանգության խորհուրդը լիովին համաձայն է Կայ Էյդեի գնահատականին, որ, չնայած դեռևս Կոստովոյի և տարածաշրջանի առջև ծառացած են մարտահրավերներ, ժամանակն է տեղափոխվել քաղաքական գործընթացի հաջորդ փուլ։ Այդ պատճառով Խորհուրդը պաշտպանում է Գլխավոր քարտուղարի մտադրությունը՝ քաղաքական գործընթաց սկսելու վերաբերյալ, որը կորոշի Կոստովոյի ապագա կարգավիճակը, ինչպես նախատեսված է 1244 (1999) բանաձևով»⁹։

Էյդեի երկու զեկույցները կարևոր նշանակություն ունեցան ոչ միայն Կոստովոյի ապագա կարգավիճակի որոշման գործընթացի մեկնարկի տեսակետից, այլև նախանշեցին այդպիսի գործընթացի արդյունավետության ապահովման առումով առանցքային նշանակություն ունեցող մի շարք մոտեցումներ.

- «նախ՝ չափորոշիչներ, ապա՝ կարգավիճակ» քաղաքականությունն անհապաղ պետք է վերանայել,
- ապագա կարգավիճակի որոշման գործընթացի ժամկետների հետաձգումը դժվար թե նոր և էական արդյունքներ տա չափորոշիչների իրականացման հարցում,
- կարգավիճակի որոշման գործընթացում պետք է ներգրավել և դրա ողջ ընթացքի մեջ պահել բոլոր կողմերին,
- շատերը Բելգրադում կարող են հասկանալ, որ Կոստովոյի նկատմամբ իշխանությունը վերականգնել հնարավոր չէ, և այդ խնդրի

⁹ UN doc. (Statement by the President of the Security Council) S/PRST/2005/51, 24 October 2005.

լուծման տնտեսական ու քաղաքական առավելությունները՝ եվրոպական ինտեգրացիայի ենթատեքստում, կարող են լինել զգալի, մինչդեռ ապագա կարգավիճակի հարցի քննարկման ձգձգումը կթուլացնի Մերքիայի դիրքերը նաև այդ ուղղությամբ (ակնարկը ակնհայտ է՝ Կոսովոյի իրատեսական կարգավիճակը կարող է լինել անկախությունը - Տ. Թ.),

• միջազգային հանրությունը պետք է անիամեն հնարավոր բան՝ ապահովելու համար, որ այդ կարգավիճակը, ինչպիսին էլ այն որոշվի, չլինի չկայացած:

Այլ հակամարտությունների կարգավորման տեսակետից ևս արժեքավոր այս մոտեցումները դարձան Կոսովոյի ապագա կարգավիճակի որոշման գործընթացի հիմքը, որը դրվեց Էյդեի երկրորդ զեկույցը ՄԱԿ Անվտանգության խորհրդին փոխանցելուց մեկ ամիս անց:

Ահտիսաարիի զեկույցը՝ կարգավիճակի որոշման հայեցակարգ: 2005 թ. նոյեմբերին Գլխավոր քարտուղարը Ֆինլանդիայի նախկին նախագահ Մ. Ահտիսաարիին նշանակեց իր Հատուկ բանագնաց՝ Կոսովոյի ապագա կարգավիճակի որոշման գործընթացում: Անվտանգության խորհուրդը հավանություն տվեց այդ նշանակմանը: Գլխավոր քարտուղարը Ահտիսաարիին ուղղված նամակի հավելվածով սահմանում էր «Գործողությունների շրջանակը», որի համաձայն «կարգավիճակի որոշման գործընթացի տևողությունը որոշում է Հատուկ բանագնացը՝ Գլխավոր քարտուղարի հետ խորհրդակցությունների հիման վրա, հաշվի առնելով կողմերի համագործակցությունը և իրավիճակը»: Անվտանգության խորհուրդը հավանություն տվեց Շփման խմբի (Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ ներկայացուցիչներից բաղկացած ոչ պաշտոնական խումբ, որը կազմվել էր 1994 թ. Բալկաններում ստեղծված իրավիճակի կապակցությամբ) «Ղեկավար սկզբունքներին», համաձայն որի՝ կարգավիճակի որոշման գործընթացը մեկնարկելուց հետո այն չի կարող խոչընդոտվել և պետք է հասնի ավարտին: Կողմերին կոչ էր արվում գործել բարեխղճորեն և կառուցողական, զերծ մնալ միակողմանի քայլերից, մերժել բռնության ցանկացած ձև: Միաժամանակ այն արձանագրում էր, որ Կոսովոյի կարգավիճակի եզրափակիչ լուծումը պետք է հաստատվի Անվտանգության խորհրդում: Մինչև 2006 թ. սեպտեմբեր կողմերը մի շարք հանդիպումներ անցկացրին, սակայն, ըստ Գլխավոր քարտուղարի, նրանք «մնացել էին միմյանցից հեռու խնդիրների մեծ մասի վերաբերյալ»¹⁰: Գլխավոր քարտուղարի Հատուկ բանագնացը 2007 թ. մարտի 10-ին կողմերին հրավիրեց բանակցությունների եզրափակիչ հանդիպմանը՝ քննարկելու կարգավորման առաջարկությունը: Ըստ Գլխավոր քարտուղարի¹¹, «կողմերը անկարող էին

որևէ

լրացուցիչ

¹⁰ UN doc. (Reports of the Secretary-General on the United Nations Interim Administration Mission in Kosovo) S/2006/707, S/2006/906.

¹¹ UN doc. (Report of the Secretary-General on the United Nations Interim Administration Mission in Kosovo) S/2007/395, 29.06.2007.

հաջողության հասնելու»: Մարտի 26-ին Գլխավոր քարտուղարը Անվտանգության խորհրդին ուղարկեց իր Հատուկ բանագնացի զեկույցը և Կոսովոյի կարգավիճակի որոշման համապարփակ առաջարկություն¹², որի համաձայն «մեկ տարուց ավելի տևած ուղիղ բանակցություններից, երկկողմ՝ բանակցություններից ու խորհրդակցական հանդիպումներից հետո պարզ դարձավ, որ կողմերը պատրաստ չեն Կոսովոյի ապագա կարգավիճակի վերաբերյալ համաձայնության հասնելու... Բելգրադը պահանջում է ինքնավարություն Սերբիայի կազմում, իսկ Պրիշտինան համաձայն չէ անկախությունից բացի որևէ այլ տարբերակի... Մպաովել է բանակցությունների ներուժը Կոսովոյի կարգավիճակի հարցում որևէ փոխընդունելի արդյունքի հասնելու համար: Ոչ մի լրացուցիչ բանակցություն, ինչ ձևաչափով էլ լինի, հնարավորություն չի տա դուրս գալու փակուղուց... Կոսովոյի կարգավիճակը որոշելու ժամանակը եկել է: Ուշադիր ուսումնասիրելով Կոսովոյի ժամանակակից պատմությունը, Կոսովոյի այսօրվա իրողությունները և հաշվի առնելով կողմերի հետ բանակցությունները՝ ես եկել եմ եզրակացության, որ Կոսովոյի համար միակ կենսունակ տարբերակը անկախությունն է՝ սկզբնական շրջանում միջազգային հանրության հսկողության ներքո»¹³: Ահտիսաարին իր զեկույցում եզրակացրել է, որ «Կոսովոյի իրավիճակը եզակի դեպք է, որը պահանջում է եզակի լուծում: Այդ լուծումը նախադեպ չի ստեղծում մյուս չկարգավորված հակամարտությունների համար»: Ըստ նրա՝ Կոսովոյի իրավիճակի եզակիությունը պայմանավորված է այն բանով, որ «միաձայն ընդունելով 1244 (1999) բանաձևը՝ Անվտանգության խորհուրդը, ի պատասխան Կոսովոյում Միլոշևիչի գործողությունների, Սերբիային զրկեց ղեկավար դերակատարությունից Կոսովոյում և վերջինիս դրեց ՄԱԿ ժամանակավոր կառավարման ներքո, ինչպես նաև նախատեսեց քաղաքական գործընթաց՝ Կոսովոյի ապագա կարգավիճակը որոշելու համար»: Իր զեկույցում Ահտիսաարին փորձել է հիմնավորել, թե ինչու Կոսովոյի «վերաինտեգրացիան Սերբիայի կազմում կենսունակ տարբերակ չէ»: Նախ նա հակիրճ նկարագրում է Կոսովոյի ալբանացիների ու սերբերի «բարդ հարաբերությունները, որոնք վատացան 90-ականներին Միլոշևիչի վարչակարգի գործողությունների հետեվանքով: Իրականացվող ճնշիչ քաղաքականությանը բազմամյա խաղաղ դիմադրությունից հետո, որը ներառում էր Կոսովոյի ինքնավարությունը չեղյալ համարելը, պարբերական խտրականությունն ալբանացիների նկատմամբ, որոնք կազմում էին Կոսովոյի զգալի մեծամասնությունը, և նրանց փաստացի դուրսմղումը հասարակական կյանքից, Կոսովոյի ալբանացիները վերջ ի վերջո անցան զինված դիմադրության: Դրան հետևեցին Բելգրադի ավելի հզոր և դաժան պատժիչ միջոցառումները, որոնք հանգեցրին քաղաքացիական անձանց ողբերգական կորուստների և Կոսովոյի ալբանացիների

¹² UN doc. (Report of the Special Envoy of the Secretary-General on Kosovo's Future Status) S/2007/168, 26.03.2007.

¹³ UN doc. S/2007/168, 26.03.2007.

զանգվածային դուրսմղմանն ու վտարմանը իրենց տներից և Կոսովոյի տարածքից: Իրավիճակի կտրուկ վատթարացումը ՆԱՏՕ-ին ստիպեց միջամտել, և այդ իրադարձությունների գագաթնակետը դարձավ 1244 (1999) բանաձևի ընդունումը»: Անդրադառնալով դրանից հետո ստեղծված իրավիճակին՝ Ահտիսաարին զեկույցի հաջորդ՝ 7-րդ պարբերությունում նշում է, որ «վերջին ութ տարիներին Կոսովոն և Սերբիան կառավարվում են բացարձակապես անջատ: 1244 (1999) բանաձևի համաձայն՝ ԿՄԱԿԱ-ի ստեղծումը և Կոսովոյի ողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ամբողջության ստանձնումն այդ մարմնի կողմից ստեղծեց մի իրավիճակ, որտեղ Սերբիան Կոսովոյում կառավարման որևէ լիազորություն չի իրականացնում: Դա անվիճելի իրողություն է, և այն անշրջելի է: Կոսովոյի վերադարձը Սերբիայի կառավարման ներքո անընդունելի կլինի Կոսովոյի բնակչության ճնշող մեծամասնության համար: Բելգրադը չի կարող վերականգնել իր իշխանությունը առանց դիմադրության: Ինքնավարությունը Սերբիայի սահմաններում, ինչքան էլ պայմանական ինքնավարություն լինի, պարզապես անհնարին է»: Ապա Ահտիսաարին պնդում է, որ «միջազգային կառավարման շարունակումն անհնարին է: Ըստ նրա, ԿՄԱԿԱ-ի ստեղծումն առաջացրեց աշխույժ քաղաքական գործընթաց, որը ուժեղացրեց Կոսովոյի բնակչության օրինական հույսերը իր գործերի կառավարման սեփական լիազորությունների ու պատասխանատվության ընդլայնման վերաբերյալ: Միջազգային կառավարման պահպանումը չի կարող բավարարել այդ ձգտումները: ...Կոսովոյի քաղաքական կարգավիճակի անորոշությունը նրա համար խոչընդոտ է միջազգային ֆինանսական կազմակերպությունների մատչելիության, տարածաշրջանային տնտեսությանը լիարժեք ինտեգրման և օտարերկրյա կապիտալի ներգրավման և աղքատության ու գործազրկության դեմ պայքարի համար»: Գլխավոր քարտուղարի Հատուկ բանագնացը Կոսովոյի կարգավիճակի որոշման հարցում հանգում է եզրակացության, որ «Անկախությունը միակ տարբերակն է, որն ընդունակ է ապահովելու Կոսովոյի քաղաքական կայունությունն ու կենսունակությունը: Քաղաքական երկիմաստության պահպանումը Կոսովոյում և տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունը կթողնեն վտանգված: Անկախությունը լավագույն երաշխիքն է այդ վտանգի չեզոքացման համար, այն Կոսովոյի և Սերբիայի համար բացում է կայուն, տևական գործընկերության լավագույն հնարավորություններ»: Իհարկե, կարելի է Ահտիսաարիի զեկույցում և Կոսովոյի կարգավիճակի կարգավորման համապարփակ առաջարկություններում նշել մի շարք թույլ կետեր, սակայն ՄԱԿ-ի հիմնարար գաղափարների, սկզբունքների ու մարդու և ժողովուրդների իրավունքների տեսակետից հետևություններն ու առաջարկությունը միանգամայն հիմնավոր են և այլընտրանք չունեն:

Կից նամակում Գլխավոր քարտուղարը հայտնում էր, որ լիովին պաշտպանում է իր Հատուկ բանագնացի առաջարկությունը: Փաստաթուղթը փոխանցվեց նաև Անվտանգության խորհրդի անդամներին:

րին: Անվտանգության խորհուրդը չկարողացավ համաձայնության գալ Կոստովոյի կարգավիճակի վերաբերյալ: Ռուսաստանը և Չինաստանը դեմ էին Կոստովոյի անկախության ճանաչմանը: Բելգիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրված նախագիծը¹⁴ հետ վերցվեց մի քանի շաբաթ անց: Օգոստոսից դեկտեմբեր հետագա բանակցություններն ընթանում էին Եռյակի հովանու ներքո, որի մեջ մտնում էին Եվրամիությունը, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: Ստեղծվել էր փակուղային իրավիճակ: Ակնհայտ է, որ այն առաջին հերթին չէր բավարարում Կոստովոյին, և այն բանից հետո, երբ նոյեմբերի 17-ին անցկացվեցին Կոստովոյի խորհրդարանական և տեղական ինքնակառավարման ընտրությունները, Կոստովոյի իշխանությունները վճռականորեն հայտարարեցին, որ իրենց համար ընդունելի չէ հարցի ձգձգումը, և իրենք պատրաստ են միակողմանի քայլերի, եթե մինչև տարեվերջ Անվտանգության խորհուրդը չկարողանա որոշում ընդունել: Դեկտեմբերի 4-ին Եռյակը Գլխավոր քարտուղարին հայտնեց, որ «կողմերն ընդունակ չեն համաձայնության հասնելու, և ոչ մի կողմը չի ցանկանում զիջում անել ինքնիշխանության հարցում»: Գորդյան հանգույցը լուծվեց Կոստովոյի իշխանությունների միակողմանի քայլով, ինչը իրադարձությունների նոր փուլի մեկնարկ դարձավ: Մինչ այդ փուլի վերլուծությանն անցնելը հարկ է արձանագրել, որ եթե Էյդեի զեկույցները անհրաժեշտ հիմք նախապատրաստեցին Կոստովոյի ապագա կարգավիճակի որոշման համար, ապա Ահտիսաարիի զեկույցը և դրա հիման վրա հետագա գործունեությունը ոչ միայն հիմնավորեցին այդ գործընթացն անհապաղ սկսելու անհրաժեշտությունը, այլև հստակ սահմանեցին, որ անկախությունը որպես Կոստովոյի կարգավիճակ այլընտրանք չունի: Ավելին, Ահտիսաարին փորձեց հիմնավորել այդ գաղափարը.

- Բելգրադը պահանջում է ինքնավարություն Մերբիայի կազմում, Պրիշտինան համաձայն չէ անկախությունից բացի որևէ այլ տարբերակի: Ոչ մի լրացուցիչ բանակցություն, ինչ ձևաչափով էլ լինի, հնարավորություն չի տա դուրս գալու այդ փակուղուց:

- Մերբիան Կոստովոյում կառավարման որևէ լիազորություն չի իրականացնում: Դա անվիճելի իրողություն է և անշրջելի է: Կոստովոյի վերադարձը Մերբիայի կառավարման ներքո անընդունելի կլինի Կոստովոյի բնակչության ճնշող մեծամասնության համար:

- Քաղաքական երկիմաստության պահպանման դեպքում Կոստովոյում և տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունը կմնան վտանգված: Անկախությունը միակ տարբերակն է, որն ընդունակ է ապահովելու Կոստովոյի քաղաքական կայունությունն ու կենսունակությունը:

Քաղաքական նկատառումներով Ահտիսաարին իր զեկույցում նշում է, որ «Կոստովոյի իրավիճակը եզակի դեպք է, որը պահանջում է եզակի լուծում»: Նա փորձում է հիմնավորել

այդ

տեսակետը՝

¹⁴ UN doc. S/2007/437Prov., 17.07.2007.

նշելով երկու գործոն, որոնք հետագայում մատնանշեց նաև Խ. Սոլանան: Մակայն դա թերևս միակ գաղափարն է, որը բացարձակապես անընդունելի է Ահտիսաարիի զեկույցում: Այդ թեզի լիակատար սնանկությունը բացահայտում է, օրինակ, Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների համեմատական վերլուծությունը¹⁵, որտեղ ցույց է տրվում, որ, օրինակ, Լեռնային Ղարաբաղի դեպքում ոչ միայն առկա են այդ գործոնները, այլև մի շարք առումներով, ի տարբերություն Կոսովոյի, այդ դեպքն անթերի է: Հետաքրքիր է, որ Ահտիսաարին նույն՝ քաղաքական նկատառումներով իր զեկույցում որևէ ձևով չի անդրադառնում ինքնորոշման իրավունքին, որի կիրառմամբ է միայն հնարավոր անկախության միակողմանի հռչակումն ու դրա իրավական հիմնավորումը:

Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը 2008 թ. փետրվարի 17-ին և ճանաչման գործընթացը: Անկախության հռչակագիրն ընդունվեց 2008 թ. փետրվարի 17-ին, Կոսովոյի խորհրդարանի արտահերթ նիստում, որին մասնակցում էին 120 պատգամավորներից 109-ը (տասը սերբ և Գորանի համայնքից ընտրված մեկ պատգամավոր բոյկոտեցին նիստը): Պատգամավորները, այդ թվում և կառավարության անդամները, ինչպես նաև երկրի նախագահն ու վարչապետը ստորագրեցին մինչ այդ բարձրաձայն ընթերցված հռչակագիրը: Կոսովոյի անկախությունն անմիջապես ճանաչեցին Միացյալ Նահանգները և Եվրամիության մի շարք առաջատար երկրներ: Մի քանի ամսում Կոսովոյի անկախությունը ճանաչած երկրների թիվը հասավ գրեթե հինգ տասնյակի: Ակնհայտ էր, որ զարգացումները տանում էին դեպի լիարժեք ճանաչում և անդամակցություն ՄԱԿ-ին: Սերբիան ոչ միայն Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը անմիջապես հայտարարեց անօրինական, այլև փորձեց ճանաչումների գործընթացը կասեցնելու ուղիներ որոնել: ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամներ Ռուսաստանի և Չինաստանի դատապարտող հայտարարությունները կամ Եվրամիության մի քանի անդամների չմիանալը ճանաչման գործընթացին՝ հետագա զարգացումների վրա էական ազդեցություն չունեցան: Աշխարհը թվաց, թե Բելգրադը գտել է գործուն միջոց: Սերբիայի ներկայացրած բանաձևի նախագծի հիման վրա ՄԱԿ Գլխավոր ասամբլեան 63-րդ նստաշրջանում 2008 թ. հոկտեմբերի 8-ին քննարկեց և ընդունեց 63/3 բանաձևը, որով Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական կարծիքն էր ակնկալվում այն հարցի վերաբերյալ, թե «արդյո՞ք Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը չի հակասում միջազգային իրավունքի նորմերին»: Ընդ որում, բանաձևի ընդունմանը կողմ քվեարկեցին հիմնականում այն երկրները, որոնք դեմ էին Կոսովոյի անկախության ճանաչմանը (Ռուսաստան, Չինաստան, Իսպանիա,

¹⁵ Թորոսյան Տ., *Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում*, Ե., 2008, էջ 127-148, **Торосян Т.** *Косово и Нагорный Карабах: сравнительный анализ конфликтов и процессов урегулирования.* - <http://www.regnum.ru/news/1317218.html>, 21.08.2010.

Ադրբեջան և այլն): Այն երկրները, որոնք ճանաչել էին Կոստովոյի անկախությունը, հիմնականում կամ դեմ քվեարկեցին (ԱՄՆ, Ալբանիա և այլն), կամ ձեռնպահ (Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա և այլն): Մի խումբ երկրներ էլ (Իսլանդիա, Նորվեգիա, Բելգիա և այլն), որոնք ճանաչել էին Կոստովոյի անկախությունը, կողմ քվեարկեցին Սերբիայի առաջարկած բանաձևին «միջազգային իրավունքի հիմնարար կարևորության հիման վրա, հատկապես փոքր երկրների համար, և լիակատար վստահությամբ ու աջակցությամբ այն պատկերացմանը, որ միջազգային իրավունքի կանոններն ու սկզբունքները միշտ պետք է ղեկավարեն պետությունների վարքը»¹⁶ (Իսլանդիայի դեսպան Հանեսսոնի՝ քվեարկությունից հետո արված մեկնաբանությունից):

Եզրակացություն

Կոստովոյի վերջնական կարգավիճակի որոշման գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն բացառիկ նշանակություն ունի ոչ միայն Կոստովոյի, այլև մի շարք այլ հակամարտությունների կարգավորման տեսակետից, քանի որ այդ գործընթացը հաստատեց, որ

- կարգավիճակի քաղաքական երկիմաստության պահպանման դեպքում ինքնորոշվող տարածքի և տարածաշրջանի խաղաղությունն ու կայունությունը կմնան վտանգված,
- ապագա կարգավիճակի որոշման խնդիրը առաջնայինն է,
- կարգավիճակի որոշման ամբողջ գործընթացում պետք է ներգրավված լինեն հակամարտության բոլոր կողմերը,
- կարգավիճակի վերաբերյալ մետրոպոլիայի և ինքնորոշվող տարածքի անհամատեղելի պատկերացումների պարագայում բանակցությունների շարունակումն աննպատակ է, և լուծումը պետք է ձևակերպվի միջազգային իրավունքի շրջանակներում,
- անգամ Միացյալ Նահանգների, Եվրամիության առաջատար երկրների աջակցությունը վայելող Կոստովոյի անկախության ճանաչման գործընթացի հանգուցալուծման համար ի վերջո պահանջվեց իրավական հիմնավորում: Մինչդեռ Արխանգելսկի և Հարավային Օսեթիայի պարագայում խնդրի իրավական բաղադրիչի ապահովման հարցում անհետևողականության պատճառով, Ռուսաստանից բացի, անկախությունը ճանաչել է ընդամենը մի քանի երկիր:

¹⁶ UN doc. (General Assembly, Sixty-third Session, 22nd Plenary Meeting. Agenda item 71, Official Records) A/63/PV.22

ЗНАЧЕНИЕ ПРОЦЕССА ОПРЕДЕЛЕНИЯ СТАТУСА КОСОВО В КОНТЕКСТЕ ПРИНЦИПОВ УРЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТОВ

ТОРОСЯН Т. С.

Резюме

После оглашения консультативного мнения Международного суда правосудия ООН о соответствии одностороннего провозглашения независимости Косово нормам международного права с новой силой возобновились дискуссии о разрешении конфликтов в рамках международного права. С этой точки зрения особое значение приобретает исследование процесса определения статуса Косово. Анализ ключевых моментов, закономерностей и результатов процесса показывает, что эти закономерности имеют важное значение не только для урегулирования Косовского конфликта, но и для других конфликтов. В частности, процесс определения статуса Косово наглядно демонстрирует, что важнейшей и первостепенной задачей урегулирования конфликтов является определение статуса самоопределившейся стороны, а участие всех сторон конфликта во всех этапах урегулирования является необходимым условием успешного окончания этого процесса.